9

Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Գ. Մ. Մակիչյան
«22» սեպտեմբերի 2009թ.

Հաստատված է համալսարանի
գիտական խորհրդի 2009թ.
սեպտեմբերի «22» -ի որոշմամբ
(արձ. № 2)

Կարգ
Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին Հյուսիսային համալսարան ընդունելու

1. Ոչ պետական չհավատարմագրված միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները չեն կարող ընդունվել Հյուսիսային համալսարան:
2. Պետական և ոչ պետական հավատարմագրված միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները (այսուհետև՝ Միջին մասնագիտական կրթությամբ շրջանավարտներ) կարող են ընդունվել Հյուսիսային համալսարանի ցանկացած ֆակուլտետ՝ ընդհանուր հիմունքներով:
3. Միջին մասնագիտական կրթությամբ շրջանավարտները մրցութային կարգով կարող են ընդունվել համալսարանի բարձր՝ այն է 2-րդ և (3-րդ հեռակա) կուրսեր՝ իրենց կամ հարակից մասնագիտությամբ:
4. Միջին մասնագիտական կրթությամբ շրջանավարտների՝ համալսարանի բարձր կուրսեր ընդունելությունը թույլատրվում է, եթե առարկաների ժամաքանակների 25%-ից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգարքների և քննությունների թիվը չի գերազանցում 8-ը:
5. ՀՀ ԿԳ նախարարի 2007 թվականի հունիսի 19-ի թիվ 588-ԱՔ հրամանով հաստատված "Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի" 5.5. կետով նախատեսված՝ ուսանողի կողմից ուսումնառության անհատական ծրագրի ընտրության դեպքում կրեդիտների (մոդուլների) տարբերությունը գնահատելիս հաշվի է առնվում անհատական ծրագրով նախատեսված դաշնթացների հնարավորությունները:
6. Դիմորդների դիմումները քննարկելու և մասնագիտական առարկաներից հարցազրույց անցկացնելու նպատակով համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է համապատասխան ատեստավորման հանձնաժողով:
7. Ատեստավորման հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալն է, իսկ հանձնաժողովի անդամները՝ ֆակուլտետների /դեպարտամենտների/ ղեկավարները կամ նրանց փոխարինողները:
8. Միջին մասնագիտական կրթությամբ շրջանավարտի բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու նպատակով դիմորդի Հյուսիսային համալսարան ընդունումը, իրականացվում է Հյուսիսային համալսարանի ռեկտորին ուղղված դիմորդի անձնական դիմումի համաձայն, որին կցվում է դիպլոմը և դիպլոմի ներդիրը:
9. Դիմորդի ընդունումը Հյուսիսային համալսարան կատարվում է ռեկտորի հայեցողությամբ՝ ատեստավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

10. Տվյալ մասնագիտությամբ այդ կուրսում սովորող ուսանողների թվաքանակը չպետք է գերազանցի ՀՀ կրթության և գիտության նախարարության լիցենզիայով սահմանված տեղերի քանակը:
11. Ատեստավորման հանձնաժողովը մրցութային հավասար ցուցանիշների դեպքում հաջորդաբար առավելություն է տալիս՝
    - միջին մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրում նշված առարկաներից առավել բարձր միջին գնահատական ունեցող դիմորդներին,
    - տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին,
    - աշխատանքային ավելի երկարատև ստաժ ունեցող դիմորդներին:
12. Ատեստավորման հանձնաժողովը դիմորդի ընդունման մասին եզրակացության և անձնական գործի փաթեթի (դիմորդի դիմումը, դիպլոմը և դիպլոմի ներդիրը, սահմանված տարեկան ուսման վարձի առնվազն 1/3 վճարման անդորրագիրը և նրա հետ կնքված համապատասխան պայմանագիրը) հիման վրա համապատասխան դեկանատների միջոցով ռեկտորին զեկուցագիր է ներկայացնում դիմորդին հրամանագրելու, որպես Հյուսիսային համալսարանի ժամանակավոր ուսանող և նրան թույլատրելու մասնակցել ուսումնական պարապմունքներին՝ կցելով նրան համապատասխան ակադեմիական խմբին:
13. Ընդունման հրամանում կատարվում է հետևյալ գրառումը՝
    “.....-ին ..... ընդունել ..... ֆակուլտետի /դեպարտամենտի/ ..... մասնագիտության ..... կուրս ..... ուսուցման ձևով, որպես ժամանակավոր ուսանող”:
14. Հյուսիսային համալսարանում կազմվում է ուսանողի անձնական գործը, որում դրվում են ներկայացված փաստաթղթերը, ընդունման հրամանի պատճենը և պայմանագիրը: Ուսանողին տրվում է ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:
15. Ժամանակավոր հրամանում նշվում են ուսանողի ակադեմիական պարտքերի (տարբերությունների) քանակը, առարկաների ուսումնառության և ակադեմիական պարտքերի մարման անհատական ժամանակացույցը:
16. Ուսանողը պարտավոր է մարել ակադեմիական պարտքերը մեկ ամսվա ընթացքում:
17. Առկա ուսուցման համար տարբերությունների մարման ամիսներն են հոկտեմբերը և մարտը, հեռակա ուսուցման համար՝ նոյեմբերը և ապրիլը: Առկա ուսուցման համար դեկանատները, ուսումնական պրոցեսին համապատասխան, կազմակերպում են դասընթացներ և սեմինարներ: Հյուսիսային համալսարանում հեռակա ուսուցմամբ ժամանակավոր հրամանագրված ուսանողների համար, անհատական ուսումնական պլանի համաձայն, հոկտեմբեր - նոյեմբեր ամիսներին՝ տարբերությունների հանձնման զուգահեռ, կազմակերպում են նաև դասախոսություններ, գործնական պարապմունքներ և կոնսուլտացիաներ:
18. Տարբերությունները (պարտքերը) սահմանված ժամկետում մարելուց հետո, համապատասխան դեկանի առաջարկությամբ, ժամանակավոր ուսանողը ռեկտորի հրամանով հրամանագրվում է որպես հիմնական ուսանող, բացառության կարգով մինչև 2 տարբերություն կարող է երկու շաբաթյա ժամկետով համարվել որպես պարտք, իսկ այն չմարելու դեպքում ուսանողին առաջարկվում է կուրսի իջեցում:

Հյուսիսային համալսարանի
ուսումնական վարչություն